ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1957 Общественные науки

# ԳԻՏԱԿԱՆ ՍԵԱՆՍ, ՆՎԻՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

*Հայկական ՍՍՌ Կառավարության հատուկ որոշմամբ 1957 թ. սեպտեմբեր ամսին ռեսպուբլիկայում մեծ չուրով նշվեց սովետական շրջանի հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 60-ամյակը։*

*1957 թ. հոկտեմբերի 2-ին և 3-ին Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը մեծանուն բանաստեղծի ծննդյան 60-ամյա տարեդարձին նվիրված երկօրյա գիտական սեսիա անցկացրեց։ Կարդացված զեկուցումներում քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված Ե. Չարենցի գրական ժառանգության ուսումնասիրման, նրա գեղագիտական հայացքների գնահատման հետ։*

*Գիտական սեսիայում բացման խոսք է ասում ինստիտուտի դիրեկտոր ընկ. Ռ. Ն. Հովհաննու։*

*«Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին» թեմայով զեկուցում է կարդում ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը։ Նա համառոտակի ուրվագծում է Չարենցի անցած բարդ ու դժվարին ստեղծագործական ուղին։ Բանաստեղծի աշխարհայացքի ու ստեղծագործական մեթոդի մեջ խորը բեկում է կատարվում, երբ նա Մոսկվայում մտնում է Կոմունիստական պարտիայի շարքերը, մասնակցում քաղաքացիական կռիվներին, դառնում է նրա մարտիկ-պոետը։ Հայ իրականության մեջ Չարենցը առաջին բանաստեղծն է, որ մեծ ուժով ու թափով պատկերել է Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի հետ կապված դեպքերը։*

*Բանաստեղծը անշեղ կերպով ընթանում էր իր ընտրած ուղիով՝ հաղթահարելով նոր ստեղծվող սովետական դրականության առաջին տարիների դժվարությունները։ Չարենցի համար պրոլետարիատի մեծ առաջնորդ Լենինի կերպարը ոգեշնչման հզոր աղբյուր էր հանդիսանում։ Լենինին նվիրված նրա ստեղծագործություններում ընդգծված են մեծ առաջնորդի ամենարնորոշ գծերը։*

*Ակադեմիկոս Ա. Կարինյանը կանգ է առնում նաև արտասահմանում Չարենցի գրած ստեղծագործությունների վրա։ Զեկուցողը նշում է բանաստեղծի այն շրջադարձի մասին, որ նա կատարում է լեֆիզմից դեպի արվեստի ռեալիստական ուղեգիծը։*

*Չարենցը Սովետական Միության ամենատաղանդավոր գրողներից մեկն է եղել,—եզրափակում է իր խոսքը Ա. Կարինյանը,— նա հայ իրականությանը հուզող հարցերին, չնայած իր որոշ զիգզագ ու հակասական դեգերումներին, մոտեցել է ռևոլյուցիոներ պոետի դիրքերից։*

*Էսթետիկայի հարցերը Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» գրքում զեկուցումով հանդես է գալիս ընկ. Ա. Գրիգորյանը։*

*Արվեստի պրոբլեմները ասում է զեկուցողը,— մեծ տեղ են գրավում Ե. Չարենցի ժառանգության մեջ։ «Էպիքական լուսաբաց» և «Ars poetica» բանաստեղծական շարքերում Չարենցը դնում է ռևոլյուցիայի մեջ արվեստի տեղի հարցը, ինտելիգենցիայի և ռևոլյուցիայի, էսթետիկայի, պոետիկայի, իդեական բովանդակության և արվեստի պրոբլեմները։*

*Չարենցը այս բարդ հարցերի մասին խոսելու բանաստեղծական ամենաբարձր ձևն է դրտնում. Արվեստի վերաբերյալ նրա այս խորը, սուր, չափազանց հետաքրքիր մտորումները նշված են շատ նուրբ դիտումներով, երբեմն արվեստի գաղտնիքների մեջ կիսաֆանտաստիկական թափանցումով, երբեմն հանկարծակի, շշմեցուցիչ։*

*Չարենցի ո՛չ միայն աշխարհայացքի, այլև բանաստեղծական կոնցեպցիայի ամենագլխավոր խնդիրներից մեկը եղել է պարզության-բարդության պրոբլեմը, որը շատ բանում որոշում էր բանաստեղծի աշխարհայացքը, մեթոդն ու ոճը, որոշում էր նրա պոեզիայի մեթոդի և աշխարհայացքի, մեթոդի և ոճի փոխհարաբերությունը։ Պարզության-բարդության պրոբլեմը կապված է Չարենցի պոեզիայի մի այլ՝ տիպականի և բացարձակի պրոբլեմի հետ։ Ականավոր բանաստեղծը իր ողջ ստեղծագործությամբ ջարդում էր դոգմատիկ, լճացած, սխեմայից ծնված տիպականի ու բացարձակի չափանիշները։ Ամենասովորականը, չգիտես ինչու, զարմանալի բարդությամբ մտցվում է տիպականի հասկացության մեջ։ Սակայն տիպականը կարող է և ամե-*

նասովորականը չլիներ։ Իսկ այս, ինչպես ընդունված է, ոչ սակավ հայտարարվում է բացարձակ և, հետևաբար, ոչ-տիպական, ռեալիզմին հակասող։ Բայց չէ՞ որ այս տիպականը սովորական չէ, առօրյա չէ, որից խորշում է արվեստը, որպեսզի ոչ-ճշմարտացի չերևա, իսկ որից երբեք կյանքը չի խորշում և որը պետք է արտացոլի արվեստը։

Չարենցի ստեղծագործության մեջ տիպականի և բացարձակի խնդիրը անմիջականորեն կապված է գեղարվեստական և կենսական ճշմարտացիության չափանիշի հետ։ Էսթետիկայի խնդիրներին հատկապես նվիրված են «Ars poetica» լայուդները կամ էսկիզները։ Նրանցից մեկում՝ «Կես—գիշերային էսքիզ»-ում (1929), հենց վերնագրում, որոշված է նրա ժանրը։ Իհարկե սա էսկիզ է, բայց այնպիսին, որը աչքի է ընկնում թե՛ մտքի, թե՛ պատկերի և թե՛ կոմպոզիցիայի ավարտվածությամբ։

Իսկական արվեստագետը, ըստ Չարենցի, պետք է սերտ կապի մեջ լինի ժողովրդի, դարաշրջանի հետ։ Արվեստագետը մյուս դարաշրջանի և ժողովուրդների համար հետաքրքիր է այն միակ դեպքում, եթե նա օբյեկտիվորեն, գեղարվեստական բարձր ձևի կատարումով արտացոլել է դարաշրջանի առաջատար տենդենցները, դարաշրջանի հոգերանությունը, նրա շարժիչ ուժերը։

Չարենցի պոեզիան մոլեգնող տարերքն է։ Ամեն ինչ այնտեղ ալեկոծվում է, սուրում, փնտրում։ Չի գտնում՝ նորից է փնտրում, գտնում է՝ նորից է փնտրում։ Այստեղից էլ մրրիկային ռիթմերը, շշմեցուցիչ ոտանավորը։

Այսպես էր ծնվում եղիշե Չարենցի «էպիքական լուսաբացը»։

Բանասիրական գիտությունների թեկնածու Հր. Գրիգորյանը զեկուցում է «Եղիշե Չարենցի արտասահմանյան ուղևորությունը» թեմայով։

Զեկուցողը նշում է, որ Եղիշե Չարենցի 1924—1925 թթ. արտասահմանյան ուղևորությունը շատ կարևոր ու վճռական մի էջ է կազմում բանաստեղծի ստեղծագործական կենսագրության մեջ։

Թռուցիկ մի ակնարկով Հր. Գրիգորյանը կանգ է առնում բսանական թվականների առաջին տարիների գրական իրադարձությունների վրա, ցույց տալով, որ այն ժամանակ, երբ Չարենցը պատրաստվում էր արտասահմանյան իր ուղևորությանը, սովետական երիտասարդ գրականությունը Կոմունիստական պարտիայի դալափարական ղեկավարությամբ արդեն կարողացել էր որոշակի հաղթանակ ձեռք բերել թշնամական ուղղությունների հանդեպ և կանգնել իր զարգացման առողջ հիմքերի վրա։

Սոցիալիստական ռեալիզմի, նոր տիպի ու որակի գրականություն ստեղծելու ընթացքում Չարենցը ևս երբեմն ընկնում է ծայրահեղությունների մեջ։ Սակայն մարքս-լենինյան անմահ տեսության պայծառ լույսի տակ նա կարողանում է ըմբռնել իր սխալները։ Արտասահման կատարած նրա ուղևորությունը վճռական ազդակ է հանդիսանում այդ պրոցեսի արագացման համար։

Բուրժուական և բանվորական աշխարհների միջև եղած դասակարգային անհաշտելի հակամարտությունն ու օրեցօր սրվող դասակարգային պայքարը, որին մոտիկից կարողանում է ականատես լինել Չարենցը կապիտալիստական արևմուտքի երկրներում և այն վիթխարի հակադրությունը, որ գոյություն ուներ մեռնող կապիտալիզմի և իր երիտասարդ, աճող սոցիալիզմի հայրենիքի միջև, միանգամից բացեցին Չարենցի աչքերը, օգնեցին այդ ներքին հեղաշրջման պրոցեսի զարգացմանը։

Զեկուցողը, ընդարձակ մեջբերումներ կատարելով արտասահմանում գրված Չարենցի «Լենին ու Ալին», «Ստամբոլ», «Կոմունարների պատը Փարիզում» պոեմներից և այլ գործերից, կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, թե ինչքան ճիշտ էր բանաստեղծը իր բոլոր դիտողությունների և հետևությունների մեջ, թե որքան նա բաղաքականապես ճիշտ էր ըմբռնում հեղափոխության աշխարհացունց իրադարձությունները և ճիշտ կողմնորոշում տալիս ժողովրդական դանդվածների բանելիք գերի մասին այդ իրադարձությունների մեջ։

Արտասահմանից Չարենցը վերադարձավ հսկայական նոր նյութ ու տպավորություններ կուտակած։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Մանուկյանը կարդաց «Վ. Ի. Լենինի կերպարը Եղիշե Չարենցի պոեզիայում» զեկուցումը։

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության անմահ հիմնադիր Վ. Ի. Լենինի անունը եղել է և մնում է իրեն ստեղծագործական ներշնչումների անսպառ աղբյուր։ Այդ խոյապես նպատակասլաց ու հավերժորեն թարմ թեմայով ստեղծագործել է նաև Ե. Չարենցը։ Հատկանշական է, որ Չարենցի լենինյան ցիկլի երկերում և առհասարակ նրա բոլոր մյուս

ստեղծագործություններում կերտված մեծ առաջնորդի կերպարը սկզբունքորեն հակադիր է անհատի ամեն մի պաշտամունքի։

Պարտիայի, դասակարգի, ժողովրդի մարմնացումը հանդիսացող Լենինի կերպարը կերտելը չափազանց բարդ ու դժվար գործ է։ Չարենցը գեղարվեստական խոսքի մեծ վարպետներին հատուկ ակնածանքով ու մտահոգությամբ է մոտեցել Լենինի կերպարի ստեղծման պատասխանատու գործին։ Նա քաջ գիտակցել է, որ Լենինի անվան հետ է կապված մարդկության պատմության մեջ նոր դարաշրջանի, սոցիալիստական դարաշրջանի սկզբնավորումը, որ Լենինը անչափելի մեծություն է, անհասանելի գագաթ, ուստի վերցնելով «թմբուկ թեթև», ստեղծելով միտինգային, պլակատային գործեր, անհնար է կերտել նրա լիարժեք կերպարը՝ իր ամբողջ վեհությամբ ու բազմակողմանիությամբ։ Եվ մեծ բանաստեղծը այդ պատասխանատու գործի համար գտել է «մտքի, խոսքի, կառուցման անհուն նլեէջ», որոնց միջոցով Վլադիմիր Իլյիչի կերպարը հառնում է որպես ժողովրդի այնպիսի առաջնորդի, որի ամենահատկանշական գիծը աշխատավոր մասսաների հետ ունեցած անխզելի կապն է, միասնությունը («Ես և Իլյիչը», 1923 թ.)։ Չարենցը առհասարակ եղել է այն ճշմարտացի համոզմանը, որ իրոք մեծ է այն առաջնորդը, որը հասկանում է ժողովրդին, կապված է նրա հետ, խոսում է նրա սրտից, օգնում է նրան՝ նրա իղձերն ու երազանքները իրականություն դարձնելու։ Ահա այդպիսին է եղել Լենինը կյանքում, այդպիսին է նաև Չարենցի ստեղծագործության մեջ։ Լենինի անմահության գաղափարը, այն, որ նա շատ դարեր անցնելուց հետո անգամ պիտի ապրի, մոտ ու հարազատ պիտի լինի բոլոր գալիք սերունդներին, բանաստեղծը առանձին վարպետությամբ արտահայտել է Վ. Ի. Լենինի մահվան առթիվ գրված «Լենին» բանաստեղծության մեջ։

Լենինի անմահության հարցը գեղարվեստական անկրկնելի պատկերներով ու համոզման մեծ ուժով լուծելու հետ միասին, Ե. Չարենցը իր մի շարք գործերում արտացոլում է Լենինի՝ որպես մասսաների մեծ կազմակերպչի, հանճարեղ առաջնորդի և մարդու, գործունեության ու բնավորության մի քանի կողմերը։ Այս տեսակետից իրենց բյուրեղյա պարզությամբ, գեղարվեստական հնչեղությամբ ու ընդհանրացման ուժով առանձնապես աչքի են ընկնում «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին», «Լենին բեռին» և «Լենինն ու Ալին» ստեղծագործությունները։

Ընկ. Ս. Մանուկյանը այնուհետև գեղարվեստական մանրամասն վերլուծության է ենթարկում հիշված ստեղծագործությունները։

«Եղիշե Չարենցի գեղարվեստական արձակը» թեմայով զեկուցում է բանասիրական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Աղաբաբյանը։

Չարենցը հայ գրականության մեջ ոչ միայն նշանակալի դեր է խաղացել իր պոեզիայով, այլև արձակով, որը մեր գրականության մեջ միանգամայն նոր երևույթ էր թե՛ բովանդակությամբ և թե ինքնատիպ կառուցվածքով ու ձևով։ Չարենցի արձակում, անկասկած, կենտրոնական տեղ է գրավում «Երկիր Նաիրի» վեպ-սատիրան, որը անակնկալ երևույթ չէր Չարենցի ստեղծագործության և առհասարակ հայ գրականության մեջ։ Այն հանդիսացել է, մի կողմից, բանաստեղծի ստեղծագործական-գաղափարական էվոլյուցիայի օրինաչափ արտահայտությունը, մյուս կողմից՝ 20-ական թվականների հայ գրականության մեջ դրսևորված որոշ տենդենցների արդյունքը։

«Երկիր Նաիրին» հայ գրականության պատմության մեջ գեղարվեստական ունիկում է. նրա տիպականացման արվեստը, սատիրական չափազանցման ուրույն մեթոդոլոգիան, գրելաձևի զարմանալի ինքնատիպությունը և ժանրային յուրահատկությունը հիանալիորեն ներդաշնակում են դաղափարական այն բովանդակությունը, որն արծարծում է Չարենցն իր վեպում։

Պատերազմի և ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Չարենցի ստեղծագործության մեջ հայ ժողովրդի պատմական գոյության և նրա զարգացման ուղիների հարցը դառնում է հիմնական հարց։ Ժողովրդական մասսաների գիտակցության մեջ ռևոլյուցիայի գաղափարների ազդեցությամբ մշակվում է նոր վերաբերմունք դեպի Երկիր Նաիրիի պրոբլեմը. այդ նոր գիտակցության և նոր տրամադրությունների արտահայտիչն է դառնում Չարենցը, որն իր հայտնի ռևոլյուցիոն պոեմներից հետո ևս շարունակում է որոնումները հայ ժողովրդի պատմական գոյի վերաբերյալ պատմական լայն կոնցեպցիա մշակելու և իր գաղափարական մտահղացումները գեղարվեստական ինքնատիպ ձևով արտահայտելու համար։ Այդ որոնումների բարձրակետը հանդիսացավ «Երկիր Նաիրին»։

Զեկուցողը այնուհետև համառոտակի տալիս է վեպի ստեղծագործական պատմությունը և կերպարների մանրամասն վերլուծման միջոցով վեր է հանում «Երկիր Նաիրիի» գաղափարական կոնցեպցիայի յուրահատկությունը։

«Եղիշե Չարենցի գրաքննադատական հայացքները» թեմայով զեկուցում է բանասիրական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Սարյանը։

Եղիշե Չարենցը,— ասում է զեկուցողը,— ինչպես սովետական գրականության խոշորագույն վարպետներ Մ. Գորկին, Վլ. Մայակովսկին, Ալ. Տոլստոյը, Ա. Ֆադեևը,— պարբերաբար հանդես է եկել քննադատական հոդվածներով, զեկուցումներով, ճառերով և գրախոսականներով։ Այդ հոդվածներում և ելույթներում նա տեսականորեն պաշտպանել, ընդհանրացրել և ամրապնդել է սովետական լավագույն բանաստեղծների, այդ թվում նաև իր սեփական ստեղծագործական փորձն ու նվաճումները՝ հերոսական դարաշրջանին արժանի բարձրարվեստ պոեզիա ստեղծելու բնագավառում։

Զեկուցողը նշում է, որ Չարենցը իր ելույթներում ու հոդվածներում ամեն անգամ կարողացել է ուշադրության կենտրոն դարձնել ողջ սովետական պոեզիայի զարգացման տվյալ էտապի համար կարևորագույն և կենսականորեն անհրաժեշտ պրոբլեմները։ Սակայն ընթանալով դեպի այդ պրոբլեմների ճիշտ լուծումը, իր ամենավաղ հոդվածներում նա հաճախ ընկնում էր սխալների և ծայրահեղությունների մեջ։ Բուռն թափով զարգացող ժամանակի հետ կապված այդ սխալները Չարենցը հաղթահարում է՝ ստեղծագործական դժվարին և բարդ ուղիներով միշտ ընթանալով դեպի նորանոր գագաթներ։

Անցյալի ժառանգության գնահատման, սովետական պոեզիայի ազգային ձևի և սոցիալիստական բովանդակության փոխհարաբերության, հայ գրական լեզվի հետագա զարգացման և սովետական պոեզիայի ժողովրդայնության պրոբլեմներն են, որոնք ամեն մի էտապում առաջին պլանի վրա բաշվելով, իրենց մեջ խտացնում են մնացած բոլորը։

Չարենց տեսաբանը, ինչպես և Չարենց բանաստեղծը, ընթանալով հակասությունների հաղթահարման դժվարին և բարդ ճանապարհով, ըստ էության անցել է մեծ օքսանումների և խոշորագույն գեղարվեստական հայտնությունների վերընթաց ուղի՝ մուծելով իր վերին աստիճանի ինքնատիպ ավանդը սոցիալիստական ռեալիզմի ձևավորման, հարստացման և զարգացման գործում։

Զեկուցողը հանգամանորեն քննում է Չարենցի տեսական բնույթ կրող գործերը և վեր է հանում նրա գեղագիտական հայացքների զարգացումը։

Ռ. Զ.